

Ա. ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԳՐԻԳՈՐ ԵՐԷՑ ՎԱՆԵՑԻ

ԳՐԻԳՈՐ երէց վանեցի ժէ դարու հայ կարող մանրանկարիչ մըն է, որուն մասին կը համարիմ որ ցարդ չէ գրուած այլուր:

ԺՁ և ժէ դարը, մանաւանդ առաջնոյն երկրորդ մասէն սկսելով մինչեւ երկրորդի առաջին մասը Հայաստանի քաղաքական զրուծեան անտանելի պայմաններուն պատճառաւ հայ արուեստը և հայ արհեստը որակի և քանակի տարապայման նուազման ենթարկուած էին: Մահմետական տիրապետութեանց հայահալած և քրիստոնէական քաղաքականութիւնը, բռնագողթներու, արտագողթներու, բռնի կրօնափոխութեանց և մասնակի կամ ընդհանուր կոտորածներու, հալածանքներու ինչպէս նաեւ նիւթական կողոպուտներու և աւերածներու պատճառաւ Հայկական կամ Հայաստանի մշակոյթները ուժասպառ, գրեթէ մահամերձ եղած էին:

Այնուհանդերձ հոս ու հոն դեռ հերոսական փորձեր կ'ըլլային ապրումի, կեանքի գոյութեան նշոյլներ ցոյց տալու, ճիգեր՝ որոնք ոչ թէ չոր ու ցամաք զնահատութեանց արժանի են, այլ իրական և մանրամասն ուսումնասիրութեան: Իմ ըրածս հոս միայն նախնական փորձ մըն է Հայ մշակոյթով հետաքրքրուողներուն ներկայացնելու մին ժէ դարու կարեւոր ու անկարեւոր մանրանկարիչներէն, այն ալ միայն իմ անձնական համեստ ձեռագրաց հաւաքածոյիս մէկ ձեռագրէն, որուն ծագողն եղած է Գրիգոր երէց վանեցի:

Նախ կը ներկայացնեմ ձեռագիր հատորիս նկարագրութիւնը: Զեռագիրը հաւաքածոյիս մաս կազմեց 1931ին: Բարիգաբնակ զրասէր թանկագին բարեկամ՝ Պր. Հայկ Պէրպէրեան ինծի համար ձեռք բերաւ չնչին գնով մը. որուն համար հոս

սրտագին շնորհակալութիւններ յայտնել պարտք կը սեպեմ:

Զեռագրիս սկիզբի մասը Սաղմոս, իսկ Բ. մասը Նարեկ՝ ծաղկաքաղ: Ընդ ամէնը 373 թերթ, առանց մագաղաթեայ պահպանակի: Մեծութիւն 4×5 , 1¹/₂ ինճէզ: Նիւթը՝ թուղթ ոչ տեղական այլ ներածուած, ջրագիծ վաճառանիշով: Գրութիւնը միասին, կարմիրով եռագիծ շրջանակուած, 19 տող, կանոնաւոր բոլորգիր, սեւ մելանով. խորագրերէն և առաջին տողերէն ու գլխագրերէն ոմանք կարմիրով, կապոյտով ու երբեմն ռսկիով: Հանգամանքը կատարեալ: Կազմը քանդակեալ կաշեկազմ, տախտակ, ներսէն միագոյն կանաչ - դեղին քաֆրայով (մետաքս լաթ) պատած: Կազմը ունի փակիչներ, երեք հատ, որոնցմէ միայն երկու ծալրիները կը մնան իրենց արծաթ օղակներով և ճարմանդներով. մէջտեղինը կը պակսի:

Զեռագրիս յիշատակարանները.

Ա. - էջ 30ր ստացողին գրչէն. «Յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք, Տէր Աւետիս կրօնաւորին, և մեղաց թողութիւն հայցեցէք իւրն... և իւր ծնողացն. և ամենայն արեանառու մեծաւորաց իւրոց: Որ եղ յիշատակ զսուրբ սաղմոսարանս ի յանապատն Լժայ ի դուռն սրբոյն Գէորգեայ զօրավարին, յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց: Որ ոք նենգութեամբ կամ խեթիւ հեռացուցանէ զսա ի զրանէ սրբոյն Գէորգեայ կամ ծախէ կամ զրաւէ և կամ զողանայ՝ զանէծս Կայանի եղբայրասպանին առցէ. և զպատիժն զմատնիչն Յուդայի և զխաչահանուացն: Այլ լաւ պահողն և խնամ տարողն օրհնի յԱստուծոյ. և յամենայն սրբոց նորա ամէն. և եղիցի եղիցի»: